ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 388 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2020 թվականի օգոստոսի 13-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» թիվ 1342-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Ստեղծել հանձնման-ընդունման հանձնախումբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2-րդ մասնաշենքի 3-րդ հարկի 32.6 ք.մ. մակերեսով անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին ամրացնելու նպատակով՝

Հանձնախմբի ղեկավար՝

Գագիկ Մելիքբեկյան – Իրավաբանական բաժնի վարիչ,

անդամներ՝

Ժորա Խաչատրյան – Ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ,

Հովհաննես Քլոյան – Վարչատնտեսական բաժնի մասնագետ,

Վիլյամ Օհանյան – ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Իջևանի բաժնի պետ-տեսուչ:

Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

13.10.2020

X

2020թ. Հոկտեմբերի 13
ք.Իջևան